արաբը հասաւ: Նահանջի ժամանակ չի կար, ուստի շուտ մը ամրոցը քաշուեցաւ եւ հողէ պատնէշներով ամրացուց ինչ որ խաթարեալ էր պարիսպներէն. դռներն ամրացնել տուաւ, եւ հրամայեց, որ փնտրեն բերդին մէջ եթէ կար ոք, որ տեղեկութիւն ունենար ելից ու մտից: Եւ ահա գտան եւ բերին բերդապահը, որ մեզի ծանօթ Խուրենն էր, որ արաբացուոց կոտորածը լսելով եկեր իջէը էր Արտոս լեռան ծործորներէն եւ մտէր բերդը միայն թաղած եւ ծածկածները զննելու, եւ որ հիմա սոսկումով կ'իմանար բերդին պաշարումը եւ շատ գոհ էր, որ գոնէ ընտանիքը լեռնեն չէր բերած:

Յովնան տեսնելով այս մարդը սկսաւ հարցնել եւ իմանալ թէ բերդը ինչ տկար տեղ ունէր պաշտպանելու, մի թէ կարելի՞ էր ծովեն նաւակ կամ լաստ գտնել եւ փախչել: Խուրեն այս հարցմունքներուն ուշադրութեամբ մտիկ դնելով եւ տեսնելով թէ այդ հասարակ մարդը շատ կը յարդէին իւր ընկերները, ըստ իւր սովորութեան ըսաւ.

— Իշխան…

— Լռէ՛, անպիտան շողոքորթ, ես էլ քեզի պէս սոսկական մարդ եմ, եղբայր չե՞ս կրնար զիս անուանէի զրուցէ միայն թէ այս քու բերդը գաղտնի ճամփայ մը՝ փախչելու տեղ մը ունի՞:

— Ինչպէ՛ս չունի, եղբայր, ստորերկրեայ ճանապարհ մը կայ, որ բերդեն դուրս վարը կը հանէ:

— Ո՞ւր վարը:

— Ահա՛, սա հին եկեղեցին կը տեսնե՞ս, ճիշտ դորայ մէջեն է ելքը խորանին տակը. Սուրբ Ստեփաննոսի եկեղեցին է դա:

— Այս մօտերս անկից մարդ անցած ունի՞:

— Ինչպէ՞ս չունի, ես այս առաւօտ անկից ներս եմ մտել: